

ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆ

(Շաբ. տես յէջ 30)

ԱԳՈՒԼԻՍ կամ ԱԳՈՒԼԻՔ. ԳԴ. AKOULIS. Ռ. ԱԿԱՄԵՒ. — Ստուգաբանութի ըստ ոմանց Այգիներով չի, շատ այգիներ ունենալուն համար՝ և ըստ տեղական անանդութեան, իբր թէ Բարդղիմէոս առաքեալը զիշեր մը բարձրակարկած քարի մը մօտ ննջելով, աչքերը կը բանայ առաւանտն յուսոյն, անոր համար նոյն տեղը կոչուեր է Ալէն ի լոյս, յորմէ աղաւաղած կը համարին Ազուլիս։ Այդ տեղը և վէմը տաւկաւին կայ, և տեղացիք կը պատուեն ճրագներ վառելով։ Բայց այս կրկին ստուգաբանութիւնք եւս զոչացուցիչ չեն. ժՍ դարու սկիզբը Սարգիս կաթողիկոսի կոնդակի մէջ գրուած է ր տառի յաւելումով Արգուշիք. նոյնպէս կը գրէ նաեւ Ջաքարիս գիտնաւկան պարագայեան ժէ. զարու կէսին՝ Աստուածաշնչի մը յիշատակարանին մէջ։

— Երկրորդ վիճակ Սիւնեաց Գողթն գաւառի, կը սահմանուի նեղ և փոքրիկ ձորակով մը, արեւելեան կողմէ և Որդուատ և արեւմտեանը Տրուսիք։ Վիճակս՝ թէեւ ըստ հին բաժանման բազմաթիւ գիւղեր չունէր, բայց ըստ նոր բաժանման ունի բաւական թուով Հայոց և այլազգեաց գիւղեր։ Խօշի լեռնէն վտակ մը, (Ազուլիս Գ.) կը բղկէ և հաւած ձեանց ջրերով առատանալով կ'անցնի իւր մէջէն, և երբեմն մեծ փնտսներ ալ կուտայ. բայց ամառը այնչափ կը նուազի որ մինչեւ Երասխ չի հասնիր։ Երջապատուած է ձորեղբերայ լեռներով, որք ձմեռը խափանելով արեւու ճառագայթից ծաւալումը՝ ցուրտը կը սաստկացընեն և մինչեւ գարունը առաջ չերթայ՝ սառնամանիք չեն հալիր։ Իսկ ընդհակառակն ամառն ալ լերինք լերի ըլլալով, ճառագայթները սաստիկ կը ցուլանան պատճառելով խիստ տաք և տօթ։ Ամրան ջրոց նուազութիւնը կը լնուն շատ մը առատարուղիս աղբիւրներ, և երկրին այգիները,


թիթենիք, տեսակ տեսակ պտուղներն և պատուական մեղրն կը մնոցընեն ձմրան խստութիւնը։ Բնակիչք՝ բարեկազմ են և քաջաբեր և կրնան համարուիլ հարազատագոյն սերունդք Գողթնեաց, որք իրենք զիրենք կը կոչեն Ջօկ կամ Ջոկ և իրարու մէջ կը խօսին յատուկ բարբառով մը, որ կը կոչուի գուկերէն, բայց այլոց հետ կը խօսին նաեւ զուտ Հայերէն։ Այս բարբառը ուսումնասիրեց բանասէրն Պ. Սարգիս Սարգսեանց, և հրատարակեց զիրք մը երկու մասէ բաղկացած, 1883ին ի Մոսկովա։ Վիճակս՝ ըստ այժմեան աշխարհագրական բաժանման՝ կ'ինկնայ Երեւան նահանգի Նախիջևան գաւառի մէջ։

— Վերին Ագուլիս. — Առաջին քաղաքաւան համանուն հին վիճակի, Փառակերտի հարաւակողմը. յետ Որդուատայ գլխաւոր շէն Գողթն գաւառի, որ օր աւուր հակառակ կը յառաջագիւլէ և ի ճնակաց կը կոչուի փոքրիկ Փարիզ։ Կառուցուած է ժայռոտ լեռան մը ստորոտը և աստիճանաբար բարձրին դէպ ի ձորը կը տարածուի. և գեղատեսիլ պարտէզներով և այգիներով կը հասնի մինչեւ հին Գաշա գիւղը, որ այժմ՝ կոչուի Ստորին Ազուլիս։ Բաժնուած է եօթն թաղերու, ունի երկայնարկ և երեքնեւեայտարկ կանոնաւոր տներ, յորոց ոմանք ունին մէկ մէկ պարտէզ խնամքով զարդարուած, ուր կ'աճին որթիք, թիթենիք, լիմոնք, նոննիք, թզենիք, անուշաբոյր վարդենիք և զանազան տեսակ ծաղկունք։ Վաճառանոցները չի են ամէն տեսակ եւրոպական և ասիական նիւթերով. կան մետաքսի գործարաններ, 100էն աւելի արուեստանոցներ, յորս նշաւուոր են կտաւագործք և ասրագործք։ Գովութեան արժանի են հասարակաց ընթերցարանը և երկսեռ դպրոցներն, որոցն յառաջագիմութեան համար ամենայն հոգ և խնամք կ'ընեն տեղւոյս բարերարք։ Փաղաքիս վրայ մեծ գովեստով կը խօսի գաղղիացի տիկինն Շանթը, որ անձամբ տեսնելով և վայելելով բնութեան գեղեցկութեան հետ քաղաքակիրթ բնակչաց ազնիւ հիւրասիրութիւնը՝ մեծ ցաւով մեկնած է աստի։ Սա կ'ըսէ. «Հանճարեղաց կեդրոն մը կրնայ հա-

մարուիլ (Ագուլիս)՝ աշխատասէր, լուսաւորեալ և հարուստ ժողովրդեան»:

Ագուլիսի սկզբնական պատմութիւնն մեզ աւանդած չեն պատմիչը, բայց յայտնի է որ ժէ դարու սկիզբը բաւական բազմամարդ թաղաք մ'էր, և Ղափանեցոյ պատմութեան մէջ կը յիշուի 10,000 տուն բնակչօք որ չափազանց կ'երեւնայ, սակայն Նալիանն ալ

կ'ըսէ. «Այս դիւղաքաղաք Ագուլիս երբեմն ունէր 8000 տուն Հայ, այժմ հազիւ թէ կայ 1000»: Շատ մը պատերազմներ, այլազգեաց յարձակմանը և աւարառութիւնը, միով բանիւ՝ բազմադիմի աղէտը և տառապանք զանազան ժամանակաց մէջ, պատճառ եղած են քաղաքիս բնակչաց նուազութեան: Այժմեան պետութեան շնորհիւ բնակիչը հան-



Ագուլիս

գիստ վիճակ մ'ունին, և ըստ 1893ի աշխարհագրին կը համարուին 1263 հոգի, յորոց ոչինչ թիւ մը կը կազմեն այլազգիք և նւթապէս եւս խեղճ դիրք մ'ունին: Քաղաքիս հին ժամանակ ունեցած մեծութեան և շքեղութեան վկայք են՝ դեռ մինչեւ օրս կանգուն մնացած եկեղեցիք և մատուռներ, որոց թիւը կը հասնի 12ի: Ժէ դարու կի-

սուն Առաքել վարդապետը և ԺԻի առաջին կիսուն Աբրահամ կաթողիկոսը՝ զլիաւորաբար չորս եկեղեցի կը զնեն յԱգուլիս, Ս. Թովմայի վանքէն զատ, որը նորոգութեան Մովսէս և Փիլիպպոս կաթողիկոսաց ժամանակ: Եկեղեցեացցս զլուս և առաջին կրնանք համարիլ Ս. Թովմայի կամ Ագուլեաց վանքը, որ ըստ աւանդութեան հաստատուած է Ս.

Բարգոզդիմէնսն, ուր թաղուած է իւր կուսնի աշակերտը, այդ պատճառաւ վերջէն եղած է եպիսկոպոսական աթոռ Գողթն գաւառի, որ և Հին Հայաստանի նախագահ եպիսկոպոսարաններէն մին էր։ Վանքիս առաջին շինութեան վրայ տեղեկութիւն չունինք ոչ մեր մատենագիրներէն և ոչ յարձանագրութեանց, վասն զի մէջը գտնուած արձանագրութիւնք բոլոր նորոգութեան ժամանակին կը վերաբերին ։ Հնագոյն արձանագրութիւնն է 1694 թուին, որ փորագրուած է եկեղեցւոյ մեծ դրան ճակատը, նոյն տեղը քանդակուած է նաեւ Ս. Թովմաս, որ ձեռքը կը մէկ փրկչին տիգախոց կողմը ։ Այս արձանագրութիւնը կ'աւանդէ Ս. Բարգոզդիմէնսն վերջ Ս. Լուսաւորչի գալուստը և նոյն վիճակին զանազան զիւղեր սեփականելը ։

Աստ գրուած դրոց յիշատակարանաց մէջ՝ իբրեւ Հնագոյն ծանօթ է Նարեկաբայ աղօթագիրք մը, գրուած 1375ին Վարդան անունով անձէ մը, որ այժմ կը պահուի Էջմիածնի մատենադարանի մէջ. իսկ 1424ին ալ Տաթևաբայ Հարցմանց վերջ մը, յեպիսկոպոսութեան Տեսաւ Տերուհակեմի՝ որ սուրբ և երանելի կոչուած է ։ Երկրորդ գրքիս յիշատակարանն կը յայտնէ նոյն ժամանակի վանքի միաբաններէն զմանս, Հանգերձ իրենց պաշտօններով, ինչպէս՝ Յակոբ ոմն հոգեւոր Հայր և վարժապետ, Յակոբ արեւդայ, Բարսեղ շնորհալի գրագիր, Յոհաննէս եկեղեցական, Ստեփանոս Հայր վանացն, Սատուկ և Մկրտիչ աշխատաւոր եղբարք, Պատուի տնտես, և այլն ։ Գրչին Մատթէոս վարդապետ կը յիշէ նաեւ ժամանակին քաղաքական անցքերէն, և կը յայտնէ թէ այն ատեն Ազուլիսի առաջնորդներն էին Ալա Գեղուգ, Ըսայիս՝ Սահր Իւէկ, և տանուտէր՝ Էղիշայ, Նոյն տարիները (1436) գրուած է Հոս նաեւ Ս. Թէոդորոս զօրավարի պատմութիւնը, որոյ գրիչն է ոմն Յովհաննէս վարդապետ ։ Այս թուականէն վերջ գրեթէ 200 տարի անժամօթ է անյիշատակ կը մնայ մենաստանս մինչեւ 1636 թուականը, յորում կը վերականգնի Մովսէս կաթողիկոսի աշակերտ խաչատուր առաջնորդի ձեռամբ, որոյ Համար կ'ըսեն. «Նորոգեաց ի

Հիմանց զսուրբ ուխտս Թովմայի, բարձրաբերձ կամարակապ և զմեթաձեւ զսուրբ եկեղեցին, և բարձր պարսպով և չորեքանկիւնի խոցերով և մոզորախերով (խոհանոցք) զարգարեաց, և բազում նեղութեամբ և շարշարանսց շինեաց » ։ Բայց եկեղեցւոյ նորոգութեան արձանագրութիւնք կը նշանակեն 1694 տարին, ինչպէս է նաեւ խաչքանդակի մը վրայինը, ուր փորագրուած է Խաչատուր առաջնորդ, բայց կամ ուրիշ Խաչատուր է այդ և կամ թուականը վերջը գրուած է Ունոփրիտս անուամբ մէկէ մը ։ Հաւանական եւս է կարծելն թէ 1679ին Այրարատայ մեծ երկրաշարժին ժամանակ խախտեր է նաեւ մենաստանս և վերջը 1694ին վերստին շինուեր է ։ Դեռ կանգուն են վանքիս զօրաւոր պարիսպներն, որք քառակուսի կը շրջապատեն ։ Հիւսիսային արեւմտեան անկիւնն է կամարակապ քարաշէն առաջնորդարանը. միաբանից սենեակները կ'ինկնան Հիւսիսային և արեւելեան կողմերը, խոհանոցն և տնտեսանն՝ արեւելեան Հիւսիսային անկիւնը, ուր կայ նաեւ ինքնարուղի պատուական ջուր. Հարաւային արեւմտեան կողմն է ամբարանոցը, որոյ վրայ ի յետնոց կառուցուած է 150—200 մանկանց վարժարան ։ Վանքի՝ մայր կամ աւագ դպրոցն է արեւմտակողման պարսպի վրայ, որ ճիշդ եկեղեցւոյ արեւմտեան դրան կը նայի ։ Եկեղեցին կառուցուած է պարսպաց մէջտեղը, ընդարձակ քառակուսի ձեւով, չափաւոր բարձրութեամբ ։ Մէջտեղին չորս ստուար սեւանց վրայ կը բարձրանայ վայելուչ կաթողիկէն, երեք ուրիշ փոքրիկ կաթողիկէններ իբրեւ զանդաւանատուն կը բարձրանան եկեղեցւոյ երեք զբանց վրայ, չորս զանգակօք ։ Մէջը կայ մարմարեայ զարդարուն խորան մը՝ ձեռակերտ պարսիկ արուեստագիտի ։ Բաց ի մեր յիշածներէն, զրանց վրայ կան նաեւ քանի մը ուրիշ արձանագրութիւնք, յորս կը յիշուին զանազան բարերարաց անուանք, որք օգնած են եկեղեցւոյ վերաշինութեան ։ Վանացս մօտ Հիւսիսային կողմը՝ կայ փոքրիկ Հին պարսպապատ մատուռ մը Ս. Բարգոզդիմէնսի կուսնի աշակերտի անուամբ, որ Հոն թաղուած կը Համարուի և ուխտատեղի է ։

Այժմ Արուիսի գլխաւոր եկեղեցին է Ս. Գրիգորիոսի, որ կը յիշուի ի գիրս, Ս. Թովմայի վանաց վերաշինութեան յառաջ. աւարտը մօտ հաստատուած է աղէկանց վարժարանը: Եկեղեցիներէն Ս. Աստուածածին կամ Անապատ կոչուածը քաղաքէն բիշ մը դուրս է, գեղազուական գրեւը, ուր զօրտափայր է Ագուլեցուց. իսկ Ս. Սիմեոն կամ Շմառն՝ քաղաքին մէջ է, որոյ մօտ կը կարծուի թէ կուսաստան եղած ըլլայ. եկեղեցւոյս մէջ կը գտնուին խաչքարեր համառօտ արձանագրութեամբք: Ս. Յովնանեան. լեւան ստորաւոր անհարթ քարերէ շինուած, ճակատն է զմթնշմայ ալ աղիւսով, զանգակատունը փայտաշարի, նշանաւոր է զարդարուն ճարտարարուեստ դուռն, շինուած՝ փայտի զանազան մանր կտորներէ խոռոս սառտափով և փղոսկրով. համառօտ արձանագրութիւն մ'ալ ունի շինել տուողին, 1682 թուականաւ: Միւս եկեղեցիք և մատուռնք կը կոչուին. Ամեճափրկիչ, Ս. Աստուածածին փոքր, Ս. Միսնա, Ս. Ստեփանոս, Ս. Յակոբ Ալիսեան, Ս. Հնճանաց Լոյս, Ս. Յակոբ Մօրնայ:

Եկեղեցւոյ արժանի է նաեւ միակամար գեղեցկադիր կամուրջը, շինուած 1713ին, երկու կողմը հայերէն և տաճկերէն արձանագրութիւններով, յորս նշանակուած են շինուիման համար նպաստողաց անուանք: Քաղաքի շուկան կ'իյնայ Հին և մեծ գեղեցկանատան մէկ մասին վրայ, միւս մասն ալ հասարակաց պարտէզ ըրած են, փոխադրելով տապանաքարերը, եկեղեցիաց նորոգութեան և շինութեան գործածելու համար:

Պարսից թագաւորաց խնամարկութեամբ ԺԶ-ԺԷ դարուց մէջ շատ բարգաւաճած է վաճառականութեամբ, բայց միեւնոյն ժամանակ երկու թշնամի տէրութեանց պատերազմներէն ոչ առկա ֆէտաթիւր ալ կերբ է: Դաւիթ բէկի պատմութեան մէջ տխուր էջ մ'ունի. մինչդեռ Սիննաց աշխարհի հայութիւնը սաստիկ ոգեւորուած, անպատմելի քաջութեամբք ամենայն ճիգն կը թափէր օտարաց լծէն ազատելու համար, Ագուլեցիք ալ միջոցին իրենց անձնական շահերուն և օգտին հետեւելով, իրենց քաղաքագլուխ Մեւլիթ Մուսիի հետ, կը դաւաճանեն Դաւիթ

բէկը և կը սպաննեն նորա աջակից Մեւլիթ քաղաքապետը: 1754ին (Հոկտ. 12) Ատրպատականի կողմնակալ Աղաս խանը մօտենալով քաղաքին, բնակիչներէն պատգամաւորներով կը ինքը իւր զօրաց համար պաշար և 100,000 զահէկան, բայց երբ քանի մը անգամ Ագուլեցիք կը մերժեն խանի այս պահանջը, Աղաս խանը կը յարձակի կատարած զօրքերով քաղաքին վրայ. բնակչաց մէկ մասը կը ջարդուի, մաս մ'ալ գերի կը տարուի: Ժամանակակից մէկը մանրամասն կը նկարարէ այս վերջին աղետալի դէպքն, զոր հրատարակած է Մեծ. Հ. Ղ. Ալիշան՝ Սինականի 334-է իջից մէջ: Աղաս խանի յարձակումէն վերջ շատ կ'անշնայայ Ագուլիս, և անգուշով որոյ հարուածներէն ազատուող բնակչաց մէկ մասն կը զաղլէ ի Հնդկիս և ալ երկիրներ, մանաւանդ ի Կ. Պոլիս, ուր ձեռք կը զարնէ իրեն ընտծին վաճառականական արուեստին:

Երբ զաղարեցան հաղառակամարտ զահաբիւրաց խոռվութիւնք, քաղաքս վերստին սկսաւ զարգանալ իւր արուեստներով և վաճառականութեամբք, մանաւանդ ներկայ պետութեան ժամանակ: Գլխաւոր վաճառքի նիւթն է մետաքսն. բնաթի են թիւնիք, որոց մէկ տեսակը որ Բեքաւնայ կը կոչուի, դեղնազոյն քաղցր պտուղներ ունի, զոր կը չորցնեն ձմեռուան համար. ուրիշ տեսակ մ'ալ Զատ կոչուածը որ այնչափ քաղցր չէ՝ կը գործածեն ցրելոյ համար: Մետաքսն զատ կը վաճառեն նաեւ բուրդ, բամբակ, կտու և մեղր: Հին ատեն Ագուլեցիք ոչ միայն Ռուսիոյ վաճառաշահ քաղաքները՝ այլ և Եւրոպիոյ զանազան կողմերը կը ճամբորդէին, յորոց ոչ սակաւք եկած են մինչեւ ի Վենետիկ: Այժմ. եւս Ռուսիայէն դուրս ի Պարսկաստան, Հնդկաստան, Հոլանտա, Անգլիա, Գաղղիա՝ կը գտնուին Ագուլեցիներ, որք կը պարսպին յանձնակատարութեամբ և վաճառականութեամբ: Ագուլեցիք՝ սովոր է առ նուազն 7 տարի պանդխտութեան մէջ մնալ, և յետոյ հարբուտացած կը վերադառնայ իր բնավայրն, իր տունը շէնցնելու և վաճառակց պտուղն վայելելու:

— Ստորին Ազուլիս. — Գրեթէ երկու միոն վերին Ազուլիսէն զէպ ի հարաւ կ'իճկուի նաք զարուս սկիզբը՝ Դաշտ գիւղը, զոր 1820—5 տարեներու մէջ, Հայերը գնելով Պարսից թագաժառանգ Ապպազ Միրզայէն՝ կոչեցին Ներքին կամ Ստորին Ազուլիս։ Բնակիչք ամբողջ Հայք են 110 տուն իբր 1000 հոգի։ Ունին երեք եկեղեցի, Ս. Երոդոսարեան, Ս. Սարգիս և Ս. Մինաս։

Ազուլիսաց նկարագրութիւնը աւարտելէ վերջ, յիշենք նաեւ 1884 տարւոյ մայիս 2 ին պատահած աղէտալի արկածը։ Նախ, ձուռնափ մեծութեամբ կարկուտ կու զայ և ապա սաստիկ անձրեւ՝ որ առաջ կը բերէ սարսափելի հեղեղ մը, որով՝ բոլոր այգիները փռնալէ զատ գրեթէ 70 տուն փառուեցան, 44 հոգի մեռան, և ամբողջ Ազուլիսը տղմով և սկով լեցուեցաւ։ Եղած ֆետսը համարուեցաւ 500,000 առաւելի։ Ողբալով գրեցին ժամանակին լրագրիւններէն՝ Արձազանք, Նոր Դար և մանաւանդ Մշակ (թ. 58. Ժի տարի) մանրամասն նկարագիրը հրատարակեց իւր Մայրմեանցի նամակով։ Չանազան քաղաքացի մէջ փառելոց համար հանգանակութիւնք եղան, և փութացին վերանորոգեցին և կարգաւորեցին զայն։ Փաղաքիս այս արկածէն քիչ օր վերջը վախճանեցաւ աղջկանց և տղայոց վարժարանաց հիմնարկու և բարերար Աւետիս Տէր Մկրտչեան 93 տարեկան։

— Սխական 323—337։ Ասաքէ պատ. 246, 247, 346, և այլն։ Չամչեան Պատ. հտ. Գ, 854։ Ազուլեցոց Բարրասը Մ. Ա. 4—15։ Փորձ. Բ տարի, Թ. Բ. 363—367։ Տիկ. Շանթը. Բագմավեպ հտ. ԽԲ (1894), 533—539։

Հ. ՍՈՒՔԻԱՍ ԷԲԹԻՆԵԱՆ

Շարայարէրի



ԱՆԻ, ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ
(Պատմական և հնագիտական հետազոտութիւն¹)

ՊՐՈՖ. Ն. ՄԱՌԻ

Ա.

ԱՆԻՈՅ հիմնարկութեան տարին անյայտ է։ Երբեմն անյայտուում է հիդրոգրոգ դարու Հայոց պատմութեան մէջ, և իւրաքանչիւր անգամ խօսքը Անույ մասին՝ է որպէս բերդ։ Անին գնահատուեց նաեւ Բագրատունի Հայ իշխաններից. երբ Բագրատունիք տեղափոխուեցին Անի, այն ժամանակ այս վերջինս զարձաւ թագաւորութեան մայրաքաղաք։ Բագրատունեաց թագաւորութիւնը իսկապէս մի իշխանութիւն էր. այն ժամանակ Հայաստանի մէջ քիչ չէին այգպիսի իշխանութիւններ. նրանցից մի քանիսը, ինչպէս օրինակի համար, Վասպուրականի իշխանութիւնը իրեն զուլիս ունենալով Արծրունի իշխանները, յաջող կերպով մրցում էին Բագրատունեաց թագաւորութեան հետ. ուրիշները, ինչպէս Լուսաւր իշխանութիւնը, որի պետերը նոյնպէս թագաւոր կ'անուանուէին և իրենց անուամբ ստակ էին կտրում Հայկական զորշմերով, իրենց գոյութիւնը շարունակեցին նաեւ Անույ Բագրատունիների անկումից վերջը. բայց և այնպէս, այս իշխանութիւններից և ոչ մէկը ընդունակ չեղան բարձր մնալու՝ գաւառական, կամ աւելի ճիշդը խօսելով՝ ցեղական շահերից. նրանցից ոչ մէկը չկարողացաւ դրաւել զէպ ի

1. Ուսուցչապետ Ն. Մառի այս յօդուածը, կատարուած Հնագիտական յանձնաժողովի յանձնարարութեամբ, այդ՝ որ տեղւոյն վրայ իւր շատ անգամ կրկնած հետազոտութեանց արդեւնքն է. իւր պատրաստած մեծ մենագրութեան միայն մի մասն է կազմուած։